

Տարեկան դիմել 10 բուլլ, կես տարվանը 6 բուլլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում դրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄԵՆԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է առն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կլասիկական գիմնա-
զիանների պատրաստականների փակման առի-
թով. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վիլհելմ II կայսրը.
Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱՎԱՆ. Խաբէրութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԼԱՍԻԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ-
ՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը վերջին ժա-
մանակներս դիմեց ուր հարկին է, խնդրելով Թիֆ-
լիսի կլասիկական գիմնազիանների պատրաստա-
կանները պահպանելու, նրանց գոյութեան նիւ-
թական հոգը միանգամայն յանձն առնելով: Նա
խնդրում է չը փակել կլասիկական ուսման այդ
նախադուրը, պատճառաբանելով թէ ինքն ան-
կարող է պատրաստել տալ մանուկներին գիմնա-
զիայի առաջին դասարանների համար: Քաղաքա-
յին վարչութիւնը անհամբեր սպասում է այդ
հարցի վերջնական լուծման:

Այս դէպքում մեզ շատ է զարմացնում քաղա-
քային վարչութեան այդպիսի վարմունքը, որը,
զուգե և անգիտակցաբար, ի չարն է գործ դը-
նում Թիֆլիս քաղաքից իրան յատկացած իրա-
ւունքները: Քաղ. վարչութիւնը յանձն է առնում
գիմնազիանների պատրաստականների պահպանու-
թիւնը, որոնք մատչելի են միայն հարուստներին,
առանց այն էլ հազար ու մի տուրքերով ծանրա-
բեռնված քաղաքի հաշուով: Քաղաքային վարչու-
թիւնը, եթէ մինչև անգամ փոխի իր մտադրու-
թիւնը և պատրաստականները միայն հարուստ-
ների հաշուով պահի,—դարձնալ անարդարութիւն
արած կը լինի, որովհետև նրանց հաշուով ձրի ու-
սում կառնեն ամբողջ նահանգի հարուստների
զաւակները: Այսպէս թէ այնպէս քաղ. վարչու-

թիւնը չը պէտք է միջնորդէ բաց պահելու դիմ-
նազիայի պատրաստականները: Քաղաքային վար-
չութիւնը աւելի լաւ կանէր, եթէ աշխատէր բա-
նալ այնպիսի ուսումնարաններ, որոնք այնպէս
պատրաստէին մանուկներին, որ նրանք իրաւունք
ունենային առանց քննութեան մտնելու գիմնա-
զիանների առաջին դասարանը և մի և նոյն ժա-
մանակ մատչելի լինէին ինչպէս հարուստներին,
այնպէս էլ չքաւորներին: Այդպիսիներն են պետա-
կան քաղաքային ուսումնարանները, որոնց նպա-
տակն է տալ բոլոր դասակարգերի տղաներին
սկզբնական կրօնական-բարոյական կրթութիւն:

Աւելորդ չի լինի առաջ բերել մի քանի յօդուած-
ներ քաղաքային ուսումնարանների կանոնադրու-
թիւնից, որոնք զետեղված են կովկասեան ուսում-
նարարական չրջանի հոգաբարձութեան 1879-ի
խիշատակարանի մէջ:

§ 6. Քաղաքային ուսումնարանները, որոնք հիմն-
վում են զեմստովոյի, քաղաքային հասարակու-
թեան, դասակարգերի, կամ մասնաւոր անձերի
հաշուով, բացվում են ուսումնարանական հոգա-
բարձու թղտութեամբ: Եթէ զեմստովոյից, քաղաքային
հասարակութիւններից, կամ դասակար-
գերն ու մասնաւոր անձինք կամենան, որ նրանց
բացած ուսումնարաններում ուսուցիչները նշա-
նակվին պետութիւնից, համաձայնութեամբ նը-
րանց, որոնք տալիս են այդպիսի ուսումնարան-
ները պահպանելու միջոցը, ապա այդ ուսումնա-
րանները օգտուում են սոցիալական հիմնարկու-
թիւնների բոլոր իրաւունքներով, որոնք պահպան-
վում են պետութեան հաշուով. հակառակ դէպ-
քում յիշեալ դպրոցները ենթարկվում են մասնա-
ւոր ուսումնարանների ընդհանուր կանոնադրու-
թեան:

§ 38. Մանուկները 10—13 տարեկան հասա-
կում, որոնք առաջադէմ կերպով անցել են քաղա-
քային ուսումնարանների առաջին 4 տարվայ
դասընթացը, կարող են առանց հարցաքննու-
թեան մտնել կլասիկական և քաղաքական ուսումնա-
րանների առաջին դասարանը:

§ 39. Առաջադէմ կերպով քաղաքային ուսումնա-

րանի դասընթաց աւարտողները, որոնք ստացել
են վկայագիր, եթէ նրանք գոյութիւն ունեցող
օրէնքների հիման վրա իրաւունք ունեն մտնելու
քաղաքացիական ծառայութեան մէջ, ապա այդ-
պիսիները ընդունվում են աւելի դիւրութեամբ,
քան նրանք, որոնք չեն սովորել քաղաքային ու-
սումնարաններում, կամ վերջիններից բարձր հիմ-
նարկութիւններում և առաջին աստիճանն ունե-
նալով՝ նրանք ազատվում են պահանջած քննու-
թիւնից:

Քաղաքային վարչութիւնը այդպիսի ուսումնա-
րաններ բանալով, որոնք անհրաժեշտ են թէ հա-
րուստներին և թէ աղքատներին, կը կատարի իր
վրա դրած պարտականութիւնը և պաշտպանած
կը լինի իւրաքանչիւր իրաւունքը, մասնաւոր,
որ այդպիսիների պահպանութիւնը տարեկան նըս-
տում է 2000—4500 ռ., որը կարելի է ստանալ
աշակերտների ուսման վարձից, եթէ մինչև անգամ
քաղաքը այդ միջոցները չունենայ: Քաղ. վար-
չութիւնը զեկալարելով այսպիսի ուսումնարան-
ներ, այնպիսի հաստատ հիմքի վրա կարող է դը-
նել այդ դպրոցները, որ այնտեղ չորս տարի մը-
նացող աշակերտները պատրաստ կը լինեն թէ
կլասիկական գիմնազիայի I դասարան և թէ միւս
բոլոր սոցիալական ուսումնարանների համար, ա-
ւելի լաւ քան մի որ և է ուրիշ ուսումնարանից,
իսկ դասընթաց աւարտող և կեանք մանուկները
բաւական ինքնուրուշ կը լինեն կեանքի պատեղադմ-
դէմ: Նրանք, որոնք կը կամենան շարունակել ի-
րանց ուսումը մասնագիտական կրթութիւն ստա-
նալու, կարող են աշխույժեամբ մրցել միւսների
հետ,—ազատ մտնել ուսուցչական ինստիտուտը,
տեխնիկական և ուրիշ ուսումնարաններ և այլն:
Այս այն ծրագիրը, որով պէտք է առաջնորդի
քաղ. վարչութիւնը և ջանայ իրագործել մինչև
վերջը, եթէ գնահատում է ընդհանրութեան շա-
հերը և ոչ թէ միայն մի քանիսների շահերը ի
շնամ ընդհանրութեան:

Թ. Տ. Ս.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՔԵՈՒԹԻՒՆ

(ՊԱՏԿԵՐ ԽՈՎԱՆ ԿԵՆՔԻՑ)

Ա

—Է, վերջնականը ինչքան կարող ես տալ, ա-
սա տեսնեն:

—Իմ արև, քու արևը գիտես, որ ասածիցս
աւելի չունեմ. էս տարի դու գիտես թէ ինչքան
ցանկեր փչացան, էս էլ որ տալիս եմ համարեա
թէ իմ երեխաներս բերանից եմ կտրում. արար
դու էլ մի քիչ իջիր քո ուղած գնից:

—Տո, երկու թումանն (20 ռ.) ինչա, որ
չես կամենում տալ քո ամենամեծ տղայիդ ազա-
նելու համար. բայց նա երեք տարվայ ընթաց-
քում 20—30 երկու թումաններ չի աշխատել:

—Էհ, Բրտեղից պիտի աշխատի, քանի որ ոչ
շատ հող ունեւ, ոչ էլ մի արհեստ գիտէ, որ
արհեստով փող աշխատի: Ապա, ինչն ու բա-
րաբեթը վերացել է աշխարհիս երեսից, հիմի
նչ աշխատանք կայ, ոչ ապրուստ:

—Է, դրանք լուր եմ Բայց քո կամքն է. ես
հո չեմ եկել քո յետից, դու եկար ինձ գիտար,
աղաչելիք, պաղատեցիր՝ որ մի կերպ յաջողե-
նեմ գործը:

—Հաւատա՛ ինձ, որ էս 10 մանեթն էլ էստեղ
եմ պարտք վերցրել, աւելի չեմ կարող տալ:

—Ձեր կամքն է. մէկ կոպեկ էլ չեմ իջնիլ:

Այսպէս խօսում էին Թ. զիւլի պոլիցիայի բա-
կի անկիւնում առանձնացած երկու մարդ: Նը-
րանցից մէկը փողը ինչ մաքուր էր հագնված և
քաղաքավարի էր երևում: Նրա դէմքը երկար,
նիւստ, աչքերը դուրս ցցված, աչքերը ներս ըն-
կած և խորամանկ, կարճ հրէական մորուքով,
բնաւորութեամբ՝ վաշխաւու 32—35 տարեկան
տղամարդ էր: Սա իրան ձևացնում էր որպէս
բարեկամ գաւառապետի, բժշկի, քննող յանձնա-
ժողովի, և իր խօսակցութեան մէջ յաճախ կը
նում էր նրանց անունը և հէնց սրանով էլ ժողո-
վում էր իր գլխին անմիտ, անփորձ, խեղճ գի-
ղացիներին՝ խաբէութեամբ նրանցից փող կորե-
լու համար:

Միւս խօսակցը Բ. զիւլացի 45 տարեկան
տղամարդ էր, հագուստը շատ հասարակ, մի քա-
նի տասնեակ կարկատաններով: Սա ունէր 4 զա-
ւակ, որոնցից ամենամեծ տղան 19 տարեկան էր,
բայց սխալմամբ ընկած էր զինուորագրական ցու-
ցակի մէջ: Նա հօրից յետոյ տան աշխատաւոր
տղամարդն էր, իր հօր աջ ձեռքն էր. առանց
սրա հայրը իրան կորած էր համարում. այդ էր
պատճառը, որ ձեռք ու ոտը էր ընկել և աշխա-
տում էր իր որդուն ազատել զինուորական ծա-
ռայութիւնից: Նրան ասել էին, որ Սողոմոն ա-
ղան շատ լաւ գործ է տեսնում. պէտք է գտնել
նրան, միջոց «քառասուրդ» լցնել զրպանը, նա
ամեն բան կանի: Այն գիւղացին զիւլ. Սողոմոն
աղային, որի հետ շարունակում էր խօսակցել...

—Բայ վերջն ինչպէս պէտք է լինի, Սողոմոն
աղա:

Աղա բառը շատ յաճախ կրկնում են գիւղացիք
այնպիսի մարդկանց անուանել կցելով, որոնցից
կախում ունեն. իսկ շատ անգամ էլ չփոխում

են «պարոն» հետ:

—Վերջն այն պէտք է լինի, որ 2 թուման կը
տաս, ես կըրթամ ինչպէս հարկն է կը խօսեմ,
ուժով քո տղային ցուցակի միջոց դուրս կը հա-
նեմ, պատասխանեց Սողոմոն աղան:

—Սողոմոն աղա, ինչո՞ւ չես, Աստուած, եր-
կինք, գիտե՞ր վկայ՝ չունեմ, որ ունենամ բա չեմ
տալ. իմ որդիքս կոտորվին թէ սուտ եմ ասում.
էս 10 մանեթն էլ պարտք եմ վերցրել: Թէ սա
հերքը չի, իմ հօգուտ պարտքը լինի կալի ժամա-
նակ 30 լիտր (9 պուլ) էլ ցորեն տամ քեզ. թող
իմ որդիքս չու. ուտեն, միայն թէ դու աշխատես
Մկրտչիս բանը յաջողեցնել:

—Ասե՛ք ես 20 մանեթից պակաս չէի յանձն
առնի այդ դժուար գործը, բայց ծանօթ մարդ
ենք, հարևան գիւղացի, թող քո ասածը լինի,
միայն ցորենը մաքուր, խտակած պէտք է լինի
և դու պէտք է բերես մեր տուն:

—Ձանձ, դրան էլ յօժար եմ, միայն թէ դու
աշխատիլ տղային անունը ցուցակի միջոց ջըն-
ջել:

—Միամիտ կաց, ես որ խոստացայ, դու կաս
յետ կը դնեմ խոստացածս կատարելու համար:
Սողոմոն աղան առաւ առաւ գիւղացու ձեռքից տա-
նանդը, գիւղացու միամտութեան վրա քնիթ
տակ ծիծաղելով հեռացաւ նոր, անփորձ, պար-
զամիտ գիւղացիներ գտնելու համար:

Բ.

Մկրտչի զօքաղդ հայրը թէ և յոյս ունէր Սողո-
մոն աղայի վրա, որ նա «ամեն բան կարող է
անել», բայց սիրտը չը համբերէ. ինքն էլ իր
կողմից էր աշխատում պաշտօնական մարդկան-
ցից մէկի, միւսի մօտ գնալ, հասկանալ թէ բանն
ինչու՞ն է:

Երկրորդ օրը վաղ առաւօտեան պաշտօնական

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

Յունիսի 12-ին

Այժմ մեր գիւղացիք շատ վատ դրութեան մէջ
են գտնվում ցորենի պակասութեան պատճառով:
Շատերը իրանց եղած չեղածը ցանեցին, (այս
տարի սովորականից շատ աւելի ցանել են կտա-
ւատ և սորուկ ցորենի ու գարու փոխանակ) հի-
մա էլ աներում ուտելու հաց չունեն, նիսիս (ա-
պառիկ) կամ բոլորովին չեն կարողանում ձեռք
բերել, կամ եթէ մի կերպ էլ ձեռք են բերում, այն
էլ խաղվարին 8—10 ռ. աւելի վճարելով: Բաւական
չէ որ ընտանիքի աշխատող ոյժերը գարնանից ար-
դէն գնացած են օտարութիւն և կօպէկներով ժո-
ղոված փողերը ուղարկում են հաց առնելու,
բաւական չէ որ տան աւելորդ (երկրագործական
գործիքներից, մի զոյգ եղնից, 2—3 կովից, մի
քանի ոչխարից և քնելու տեղաշարից բաց, միւսը
թող Աստուած աւելորդ համարէ), բաները ծա-
խել, վերջացրել են, այժմ սկսել են յիշածս բա-
ներին էլ ձեռք դարկել ու ծախել հաց առնելու
համար: Առաջ կարելի էր լինում Ղազարի գա-
ւառից ցորեն առնել, հիմա այնտեղ էլ չը կայ,
ստիպված գնում են Գանձակի մօտի գիւղերից
ցորեն բերելու, որը համեմատաբար թանկ է
նստում, թէ քրէհի շատութեան և թէ իսկապէս
ցորենի գնի բարձրանալու պատճառով, այնպէս
որ առաջվայ 33—35 կօպէկով լիտրը (12 ֆ.)
ծախվող աւելը, այժմ 40 կօպէկ է բարձրացել:
Եւ գուցէ էլ աւելի բարձրանայ, որովհետև շու-
տով կը սկսեն երևալ մեր սարերում եւ այլ աղ
(ամառանոց) եկող քրերը և թուրքերը, որոնք
նմանապէս ցորենը պէտք է գնեն Նոր-Բայազե-
տում: Նոր ցանքը առատ հունձ է խոտանում.
առատապէս տեղացող անձրևները մեր կողմի
նոր բուսած արտերին շատ օգտակար են: Բայց
տարաբաղաբար գիւղացիներից շատերը արդէն
առաջօրէն ծախել են իւր կանաչ մի վերջուկի
բարձրութեան ցորենի խաղվար 10—12 ռ. և
այդ փողով այժմ գնում են ցորեն 32—35 ռ.
խաղվարը:

մարդկանցից մէկի դրան առաջ դրալով կանգ-
նած էր Մկրտչի հայր Կարապետը:

Դուրս եկաւ ծառան, տեսնելով գիւղացուն
հարցրեց.—ինչ ես կամենում:

—Ոչինչ, աղային խնդրե՛ք ունեմ ասելու:

—Խնդրե՛ք տանը չեն ասիլ, դնա՛ գիւղականա-
նէն, էստեղ սպասի մինչև աղան կը գայ:

—Այլ ընենց բան չի, որ ուշացնեմ, պէտք է
չուտ ասեմ, նրանից էլ մի բան հասկանաւ:

—Սրանից ունեն, այս աւելով մէկ ձեռքի բոյ-
թըն ու ցուցամետը չիցի իրար:

—Տօ Բրտեղից ունենամ, հէր օրհնած, Տօ իմ
արտիս մէջ ոսկի արծաթ չի բանում, ուր գնում
եմ փող են ուղում:

—Որ էդպէս է, գնա՛ էստեղից:

—Այլ ես ուղում եմ աղային տեսնել, ո՛ր
գնամ:

—Ուր ուղում ես գնա՛, դրան առաջ մի կանգ-
նիլ:

—Ա՛ռ, ունեցած չունեցածս էլ տամ քեզ, որը
պահել էի երեխայիս համար մի շապկացու առնե-
լու համար: Հանեց Կարապետը զրպանից երկու
տասն և հինգ կօպէկանոցներ ու տուեց ծառա-
կին:

Շատան, առանց խղճահարկելու, առաւ 30
կօպէկը ու շարունակեց իր ճանապարհը դէպի
փողոց:

Կարապետը արտասուքը աչքերին՝ ընկաւ մտած-
մունքների մէջ:

Անցաւ մի ժամ փողոցները, դաշտերը, տա-
նիքները ծածկված են սպիտակ բլրերով: Եւ
դեմով. փչում է աշնանային վաղորդեան սառը
քամին: Կարապետը հագին ունի մի շապկի, մի
արխալուղ, որոնք շատ տեղերից պատառոտված
են, շատ կարկատաններ քանդված, մի վարդի,

Մեզանում նշանակված նոր դաւաճապետ պ. Միմէնէնկո մի ամսից աւելի է ինչ եկել է իր պաշտօնատեղին: Չարուն պէս գնաց դաւաճի այ- ցելով թեան և մի քանի կարգադրութիւններ ա- րաւ: Պ. Միմէնէնկո տպագրած թերթիկներով յայտարարեց ի զոռչութիւն բոլոր տանտէրե- րի (старшина), որ նրանցից ոչ ոք չը համարձա- կվի մի որ և է պաշտօնակալին հիւրասիրել և նրա համար այլ ծախսեր անել հասարակութեան հաշ- տով, սպառնալով յանցաւորներին պատժել օրէն- քի յայտնի յօդուածին համաձայն: Այն ինչ յայտ- նի է թէ առաջ ինչ տեսակ անխիղճ ծախսերի տակ էին ընկնում ողորմելի գիւղացիները: Պէտք է ասել, որ պ. Միմէնէնկո բարեխիղճ մարդ է երևում, հետևաբար կարող է և արդար դատաւոր լինել, քանի որ նա ունի ուշով ժողովրդի գանգատները, ամեն կերպ աշխատում է բաւա- կանացի նրանց: Թէպէտ պ. Միմէնէնկո առա- ջին անգամն է ինչ ստանձնել է դաւաճապետի (առաջնորդի պոլիցիականի) պաշտօն, եթէ հաս- տատ մնայ իր բռնած ընթացքին, կարող է օդ- տակար լինել ժողովրդին:

Լուում ենք, որ Գեօղարարայ և մի քանի թուրք գիւղերում անասունների մէջ երևացել է ազար հիւանդութիւնը. հարկաւոր է վարձրօք անասնաբոյժ բերել տալ, հիւանդութեան առաջն առնելու համար:

Ս. Բ.

ՆՅՈՒՆԻՆԻ ԼՈՒՐԵՐ

«С. Петерб. Вѣд.» լրագրի հաղորդում է որ պետական կառավարման միջնորդութիւնը դիտա- ւորութիւն ունի շուտով բաց անել Ռուսաստանի ներքին մի քանի նահանգներում 10 հատ անտա- րապահական (կոնսուլտորական) դպրոցներ: Այդ դպրոցներում դասընթացը լինելու է երկամսայ, գլխաւորապէս գործնական ուղղութեամբ և ու- տումնաւարտները կրելով անտառային կոնսուլ- տորների անունը, կը վայելեն այդ կոչմանը յատ- կացրած իրաւունքները:

Կօստրոմայից «Հիւսիսային գործակալութեանը» հեռագրում են որ այդ տեղի նահանգական ար- տակարգ ժողովը որոշեց խնդրել կառավարու- թեան՝ Կօստրոմայի մինչև Վիատկա երկաթու- ղու գծի անցկացնելու:

Ի. Գ. Գրիշ մեզ գրում են որ այդտեղի հայոց երկստ. դպրոցների երկու հոգաբարձուներ՝ Գրի- ղոր Տէր-Թովմասեան և Գ. Մ. Գրիգորեան, որը մի և նոյն ժամանակ երեցիվոն է, հրաժարվել են ի- րանց պաշտօնից, խոստովանելով որ իրանք այլ

որը տասը տեղից ծակծակված ու պատառոտ- ված է: Փամին չորերի պատառուածներին մի- ջով անցնելով, ծեծում էր մարմինը: Խեղճը կուշ էր եկել պատի տակ և սպասում էր աղայի զարթնելուն:

Աղան արդէն վերկացած՝ պտտում էր դաշիւնի մէջ գիշերադիտում: Երևում էր, որ աղայի սե- նեակները տաք էին, որովհետեւ նա ոչինչ մտա- լու նշան չէր ցույց տալիս:

Կարապետը տեսաւ, որ աղան պտտում է դաշ- լիւնի մէջ, ուղեց իմացնել, որ իրան, աղային, սպասող կար փողոցում: Բայց ինչպէս անէր այդ- հանգիս, սորանով ուշադրութիւն չէր գրաւի, ծե- ծէր լուսաւորաւոր, այդ անկարելի բան էր. նրա նման մէկ ողորմելի արարած աղայի լուսամուտը ծեծի... Կարող էր դուռը բաղխել, բայց եթէ յանկարծ դուռը բացատր ծառան էլ փող ուղեց, որտեղից պէտք է տար: Այս հանգամանքները նը- բան արգելեցին ոչ այս և ոչ մի այլ միջոցով յայտնել աղային իր սպասելու մասին:

Անցաւ մի ժամ ևս և ահա տնից դուրս եկաւ մի բարձրահասակ, պատկառելի դէմքով մօտ 65 տարեկան մարդ:—Աս դաւաճապետի օգնականն էր:

Կարապետը սորան տեսնելով վերկացաւ, մօ- տեցաւ, զլխարկն առած խոնարհվեց մինչև գե- տին ու դողդողալով ասաց.

—Աղա, մի խնդիր ունեմ:

—Ի՞նչ է խնդիրդ, ասա տեսնեմ:

—Աղա, ես մի որդի ունեմ 19 տարեկան, Գ. Գրիգոր տանուտէրը իր դաւթարի (մատենի) մէջ 21 տարեկան է գրել...

—Նրան իրբն վիճակորդ են հաշուել, ընդ- հատեց դաւաճապետի օգնականը:

—Հրամանդ:

ևս օգուտ չեն կարող բերել հասարակական ա- պարիզում:

Կովկասեան իշխան-կառավարապետը գտնե- լով որ իշխան Վօրոնցովի արձանի մաքուր և անշնաս պահելու հոգը պէտք է քաշէ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, յարմար համարեց այդ արձանը յանձնել քաղաքային վարչութեանը: Այդ նպատակով արդէն յանձնարարված է Թիֆլիսի նահանգապետին գրաւորութիւն սկսել քաղաքապ- լիի հետ Որպէս հաղորդում են «Новое Обозре- ние» լրագրին, քաղաքապետը իշխան-կառա- վարապետի այդ առաջարկութիւնը ներկայա- ցնելու է դումային:

Նոյն լրագրի մէջ կարդում ենք. «Որպէս յայտ- նի է, մինչև այժմ Կովկասում սպիտակ իւրաքան- չիւր գրաւորաւի համար ակցիզային տուրք էր առնվում 7 կօպէկ: Նորերս կարգադրութիւն և- դաւ եկող յովիտի 1-ից բարձրացնել այդ ակցիզը: Որպէս մեզ հաղորդում են, ակցիզային տուրքը վճարած սպիտակ համար այլ ևս լրացուցիչ տուրք չի վերցնվում»:

ԲԱՆԱՆՑ գիւղից մեզ գրում են «Անդհատ անձրևներ և հեղեղները մեծ վնասներ են հաս- ցրել գիւղացիներին: Դեռ ապրիլի վերջերում ար- տերը կարկտահար են եղել, իսկ նորերս գետը դուրս գալով ափերից, փչացրել է խաղողի այգի- ների մի մասը: Գետի կատաղի հոսանքը վնասել է մի քանի թուրք իւշաւի երկին և, ինչպէս պատմում են, թուրքերից 3 հոգի խեղդվել են ջրի մէջ: Գիւղիս ջրաղացներն էլ բոլորովին պա- րաւ են մնացել, քանի որ ջրի անհաւ բար- ձրութեան պատճառով ջրաղացների համար անց- կացրած արխերը կատարելապէս փչացրած, քանդ- ված են: Հիմա էլ անընդհատ անձրևները թող- չեն տալիս գիւղացուն դաշտ դուրս գալ և այսօր գիւղացու մանգաղն ու խոլը ընկած ժանգոտ- վում են»:

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը, յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը, բացված է արդէն «Մշակի» վեց ամսվայ բաժանորդագրին՝ 6 ռուբլի է:

Վերջին ժամանակները սպանութեան մի քանի դէպքեր պատահեցան Թիֆլիսից ոչ հեռու: Մի մարդու, Գաբաշվի, անցյալ չարագործները (ասում են թուրքերը) սպանեցին Կրճախի ճա- նապարհի վրա, մի այլ պարտին այս օրերս կո- ղպտեցին և սպանեցին Կօջօրի ճանապարհի վը- րա:

—Նմանական վկայական ունի:
—Հրամանը, երեք, չորս ամիս առաջ գործա- կալը եկաւ մեզ մօտ, քննեց և վկայական տուց, որ իմ որդիս 19 տարեկան է:

—Անունն ի՞նչ է:
—Մկրտիչ Օսանէսով:
—Ինչպէս, Մկրտիչ Օսանէսով, ծննդական վկա- յականիդ մէջ Օսանէսով է գրված:

—Չէ, աղա, վկայականի մէջ Յովհաննիսեան է գրած, բայց մեր լեզուով Օսանէսով ենք ա- տում:

—Ինչպէս թէ մեր լեզուով դուք հայ չէք, ին- չու պէտք է և ահա չասեք, այլ օվ դու դեռ չես հասկանում թէ զրանից ինչ վնասներ կարող է լինել... Նմանականիդ մէջ ինչպէս որ գրած է, այնպէս էլ պէտք է, ոչ ոք իրաւունք չունի օվը և ահա և ոչ էլ և ահա օվ չինելու: Նմանականիդ մէջ եթէ լինէր Օսանէս օվ, այդպէս էլ պէտք է ասելի, բայց որ գրված է Յովհաննիսեան, այդ- պէս էլ պէտք է ասես: Թագաւորից օրէնք կայ, որ ամեն մարդ այնպէս ասի իր անունն ու ազ- գանունը, ինչպէս որ նրա ղօկումնանների մէջ գրված է, որ իմացվի թէ իսկ սա մի և նոյն մարդն է: Եթէ պատմեց, որ ուրիշը ղօկումնե- տի ցույց տուածի նման չը գրեց, պէտք է բողո- քել, որ ուղիւ:

—Ապա ինչու, աղա, ձեր գրաւորներն էլ այդ- պէս չեն անում:

—Շատ դժբախտ են անում, որ այդպէս չեն գը- րում, նրանք ձեռնադր անհասկացող, դուք նրան- ցից, այդ բոլորը տղիտութիւնից է առաջացել: Բնիկ իրատու լինի, առաջ լաւ կարգա, իմացիւր ինչպէս է գրած ծննդական վկայականիդ մէջ, յետոյ այնպէս էլ ասա: Եթէ վկայականիդ մէջ գրված է Մկրտիչ Յովհաննիսեան, ինչ լեզուով

Ղարաբաղի Բանակով գիւղից մեզ գրում են: «Յունիսի 4-ին և 6-ին տեղաց մեզ մօտ յորդա- ռատ անձրև և հողմախառն սարսափելի կար- կուտ: Թէև կարկուտը և հեղեղը քիչ ժամանակ տևեցին, այնու ամենայնիւ մեծ վնասներ պատ- ճառեցին Սիսիանին: Միայն Բանակով գիւղին 24 հազար ռուբլու չափ վնաս եղաւ, բացի տա- րած, քչած եղներից և ուրիշ կենդանիներից»:

Նմանական ենք մեր այն դպրոցներին, որոնք դի- մում են մեզ ուսուցիչ, տեսուչ կամ վարժուհի վարձելու համար, մեր լրագրում յայտարարու- թիւն տպագրելու ժամանակ, յայտնել նոյն իսկ յայտարարութեան մէջ և բոլոր պայմաննե- րը, վարձի չափը, չաբախական դասերի թիւը և այլն: Այլապէս, եթէ այդ բոլորը չը յայտնվի նոյն իսկ յայտարարութեան մէջ, այլ պայման- ները միմայն ի գիտութիւն խմբագրութեան են ուղարկվում, մինք ստիպված ենք երկար ու բարակ գրադրութիւններ անել վարձվող մանկա- վարժների հետ, որոնք անզաւար դիմում են մեզ աշխատհիս ամեն ծայրերից ամեն տեսակ հարց- մոտքներով: պայմանների մասին իսկ այդ գրա- դրութիւն անելը ոչ թէ միայն դժուարացնում է մեզ, խելով խմբագրութիւնից անչափ շատ ժա- մանակ, բայց նոյն իսկ անհնարին է մեզ:

Երեւանի մեզ գրում են «Արթ թեմական դպրոցի տեսուչ, պ. Արիստոտ Գովհաննիսեան հրաժարական է ներկայացրել տեսչի պաշտօնից»:

Երեւանի մեզ գրում են, որ այս տարի Երե- ւանի գիմնադպարում աւարտեցին 6 հոգի աշա- կերաներ, որոնցից 5 հոգի հայեր են: Գրանցից մէկը՝ Սարգսեան, աւարտեց ոսկեայ մեդալով:

ԱՄՍԻԱՐԱԳԻՏ մեզ գրում են «Եթէ ձեր լրա- գրի առաջնորդները և Ասիացու Ֆելիքստոնները Գեորգ Աբրահամեցի մասին չը լինէին, դուք Աս- իացու խառն հայեր, երեք չէին մտած իրանց և կեղեցու երեցիկից հաշիւ պահանջելու: Այժմ յայտնվեցաւ, որ եկեղեցու արկից 400 ռուբլի պակաս է: Եւ ահա առանց որ և է հաշիւ տալու երեցիկը, այս օրերս փախել, գնացել է դէպի Բագու: Թէ Գեորգ Աբրահամի արարքը որքան պահարակելի է, դրանից է երևում, որ կարճ մի- ջոցում նրա օրինակին սկսեցին հետեւել նոյն իսկ այդ հեռու Անդրկասպեան երկրում»:

որ ասելու լինի՝ հայերէն, ռուսերէն, թուրքերէն յանդարտութեամբ լեզուով, միշտ պէտք է ասես Մը- կրտիչ Յովհաննիսեան:

—Գործակալը որ այդ վկայականը հանեց կօն- սիստօրիայից, տուեց ձեզ:

—Հրամանդ:

—Դուք էլ յանձնեցիք պօլիցիային:

—Հրամանդ, երկու-երեք ամիս առաջ ենք տուել:

—Որ այդքան առաջ էք տուել, հիմա ի՞նչ ես ուղում:

—Աղա, ինձ ասեցին, որ այդ վկայականները նշանակութիւն չունեն, ունեն ուղեւան նրան կը տանեն սալաւատ. հիմի ես եկել եմ քեզ մօտ, խնդրում եմ խոչնակ չիւն, իմ ընտանիքին. նա տանա աշխատաւորն է, առանց նրա մենք կորած ենք:

Կարապետի աչքերը լցվեցին աղի արտասուքով և նոցանից մի դրոշ գլորվելով ընկաւ ցած ցա- մաքած այտերի վրա, բարակ և խոնավ չերթ թող- նելով:

—Որ յիմարն է ասել թէ՛ նշանակութիւն չու- նի. անպիտան մարդիկ ձեզանից փող պոկելու մտքով ասած կը լինեն, մի հաւատաք նրանց, դուք փող մի ծախա՛ք:

Կարապետը վախեցաւ. Սողոմոն աղայի անունը տալ:

Գաւառապետի օգնականը փորձված և խելօք մարդ էր. նա շատ լաւ հասկանում էր, որ այդ լուրը տարածողները այնպիսիներն են, որ կամե- նում են հասարակութեան անդիտութիւնից ու ան- փորձութիւնից օգտվել:

—Դու միամիտ կաց, ասաց պ. օգնականը, այդպէս ուղեւոր բան չի լինի, սուտ են ասում. ամեն բան օրէնքով է լինում, իսկ օրէնքը ըն-

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. Մ. Հ. Մ. II ԿՍՏՈՐԸ

Պրուսիայի իշխան. Ֆրիդրիխ-Վիլհելմ-Վիկտօր- Արէքտ, գերմանական այժման կայսրը և Պրու- սիայի թագաւորը ծնվեցաւ Բերլինում 1859 թվի յունիսի 15-ին: Ազգութիւն Գերմանացի կայսրի որ- դուն «Ֆրից» էին կանչում, իսկ վերջը, ի պատիւ նրա օգոստոսիաւ պապի, սկսեցին Վիլհելմ ա- նունակ նրան: Անգլիական Վիկտօրիա թագու- հին ուղարկեց իր թոռանը, իր սիրելի Վիկտօրիա աղջկայ որդուն, մի գեղեցիկ օրօրոց: Մինչև վեց տարեկան հասակը իշխանի վարժուհին էր օրիորդ ֆօն-Գօթենէկ, բայց դրանից առաջ, մինչև վեց տարեկան դառնալը, նրա զինուորական դաստիա- րակներն էին. կապիտան ֆօն-Շրէտտեր և ապա զինուորական Օդան: 1870—71 թվերի պատերազ- մից յետոյ նրա դաստիարակ նշանակվեցաւ գե- ներալ ֆօն-Գօթենէկ:

Չինուորական դաստիարակները կարողացան մանկական հասակիցն արդէն սերմանել երկուս- տարեց իշխանի սրտի մէջ սէր դէպի զինուորական արհեստը, բայց չուտով նա սիրեց և զինուորա- կան ծովային գործը: Չը նայելով որ իշխանը շատ սիրում էր զինուորական գործը, բայց մի և նոյն ժամանակ ջանասիրութեամբ պարապում էր թէ՛ գիտութիւններով և թէ՛ լեզուներով: Մինչև եօթ տարեկան հասակը նրա ուսուցիչն էր տա- րական զարդի մի երկուստարդ վարժապետ, բայց 1866 թվականից իշխանի կրթութեան գոր- ծի ղեկավարութիւնը յանձնվեցաւ ղօկտօր Գլինց- պետէրին, որը կատարում էր այդ պաշտօնը մինչև իշխանի չափահաս դառնալը: Նրա օգոստոսիաւ ծնողները վճռեցին, որ Վիլհելմ և Հէյնրիխ իշ- խանների դաստիարակութիւնը պալատում այլ ևս չէ կարելի շարունակել, և որպէս զի իշխանները կարողանան ժողովրդի հետ չփոխ, վճռվեցաւ մի այնպիսի ուսումնարան տալ նրանց, ուր յաճա- խում էին ամեն դասակարգի մարդկանց որդիք: Առհասարակ հանգուցեալ Ֆրիդրիխ կայսրը և նրա ամուսինը ամեն կերպ աշխատում էին, որ իշխան- ները միջոցների կարողութեան չափ մօտենային ազգաբնակչութեան զանազան դասակարգերին: Այդպէս, օրինակ, ամառ ժամանակ, պատանի իշ- խանները և իշխանուհիները հետ խաղալու համար հրաւիրվում էին պալատը հասարակ քաղաքների որդիք: Երբ այժման կայսրի ծնողները յայտ- նեցին Կաստիլի լեզունի այդ վերջին իրանց որդ- կերանց դաստիարակութիւնը, Ֆօդա պատասխա-

դուում է թէ իսկական և թէ քննական ծննդա- կան վկայականները, եթէ որոշված ժամանակին հասցրած լինես ուր հարկն է, իսկ դու ասում ես որ երեք ամիս առաջ ես տուել:

—Աղա ջան, ոտացը տակին դուրբան, ես քո լաւութիւնը իսկի չեմ մոռնաւ. աշխատիր, բալ- քի իմ Մկրտիչին չը տանեն սալաւատ:

—Բողոքովն միամիտ կաց, քո Մկրտիչն չեն տանիլ սալաւատ:

Կարապետը մի քանի անգամ դուրս տալով յուսադրված հեռացաւ պ. օգնականի մօտից:

Թէ ինչ էր մտածում դաւաճապետի օգնականը գիւղացու հեռանալուց յետոյ, այդ ես չը գիտեմ, բայց այդանը յայտնի է, որ նա մտնելով պաշ- տօնատուն, ամսվայապէս սկսեց թերթիք քննական ծննդական վկայականները և գտաւ Մկրտիչ Գով- հաննիսեանին. նայեց, տեսաւ, որ ճշմարիտ նա ծնված էր 1868 թվին, ուրեմն 19 տարեկան է և անչափահաս զինուորագրութեան:

Վճռված էր Մկրտիչ և նրա հօր ու ընտանիքի բաղդը՝ Սողոմոն աղայի բաղդն էլ էր վճռված, որովհետեւ Մկրտիչը ազատվելով զինուորադա- կան ցանկից, իրաւունք ունէր Կարապետից ստա- նալ խոստացած ցորենը և երկրորդ՝ դա էլ մի նոր փաստ պիտի համարվէր միաժամանակի համար, թէ՛ Սողոմոն աղան աշխատեց և ազատեց իր կուռնեցած տղային: Ուրեմն նա այնուհետեւ պէտք է ունենար աւելի թուով խնդրողներ:

(Կը շարունակվի)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԵՐԱՆՈՑ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆՑԻ
(Կուկիա, վարժարանի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր

Ա. Ռ. Ա. Ռ. Տ. Ն. Ե. Ր.

ԲՈՒԿԱՎԱՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երկայնոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻԶԻ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 Ժ. կանանց և երկայնոց ց.
ԲԵՆԿԼԵՎԱՍԿԻ—11—12 Ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և առամների ց.
ՍՈՐՈՐԷՎ—11—12 Ժ. առամներու ց.
Ա. ԳՈՐԻՎՈ—12—1 Ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երկայնոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՁԱԵՎԱՍԿԻ—5—7 Ժ. ջրային ց. և էլէկտրո-տեղադրւած.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 Ժ. ներքին և երկայնոց ց.
Հիւանդանոցում է մահ կարգարձակի Մ. Օ. Կ. Ե. Բ.
ՎՃԱՐ—50 Կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ: Մշտա-
տիւն անկողիններ.

Հիւանդանոցի փոխ-վերահսկող ԲՈՒԿԱՎԱՍԿԻ

Մի ուսուցիչ, որ աւարտել է Ներսիսեան դպրոցում, ուսուցչական ինստիտուտում և մի քանի տարի կատարելագործվել է Գերմանիայում մանկավարժութեան մէջ ցանկանում է ուսուցչի կամ տնօրէնի պաշտօն վարել Կովկասի հայոց ուսումնարաններէ մէկում: Պայման-
ներ կարելի է խմանալ «Մշակի» խմբագրատանը: 1—3

Քաղաքային արհեստանոցում աւարտած մի վԱՐԺՈՒՀԻ կամենում է հայոց ու-
սումնարաններում դասեր ունենալ ԿԱՐԻՑ ԵՒ ՁԵՆԱԳՈՐԾԻՑ, պայմանների մասին հարց-
նել «Մշակի» խմբագրութեանը: 2—3

Въ редакціи газетъ „МШАКЪ“ прода-
ются слѣдующія брошюры: 1) „Экономич.
Положеніе Турецкихъ Армянъ“, публич.
лекція Д—ра Г. Арпруні, перев. съ арм.
А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Oeko-
nomische Lage der Armenien in der Türkei,
ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien,
ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über-
setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающіе получить бро-
шюры, благоволятъ присылать по 30 коп.
почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакція „Мшакъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (б)

Մարմին մասերը, մանուսկր ունեւոր մասները
փոխուց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

Ժախում է դեղատներում և դրոգիստներին մօտ
Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և կայսրու-
թեան բոլոր քաղաքներում: ԳԱԼՄԱՆԻՆ ՊԱՆԵՍ
գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, հնարողի, դեղատն-
տիրոջ, փարմացիայի մագիստր Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻՈՒ
մօտ, Էլէկտրոպոլսկայ փողոց, № 39. Գալմանին
մեծ արդիւր արժէ վարչակայում 50 Կ., ԲԻՐԵՐ
30 Կոպ.

ՊԵՏԻ ԵՒ ԶԳՈՐԾԱՆԱԼ ԿԵՂԾՈՒՄՆԵՐԻՑ

և պահանջել, որ իւրաքանչիւր արկղը կրէր փո-
շու դրոժածութեան բացատրութիւնը և փարիզի
ցուցահանդիսի միջոցները:

5—10 (б)

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱՋԱՅԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերթմայա փողոցում, կոնստանտինովի տան կից, որտեղ գետնովում է Լօրիս և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա-
նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄՍ-
ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱՆԵՍԱՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:
Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՆԱՅԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառու
թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ,
նոյնպէս և ջրվիճի հեշակաւոր ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աշտոնութեամբ մաքրում է ջրերը կապա-
րից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և գերազանցում է բոլոր
միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:
Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարագում է իմ գործարանում: Հնորձով այն օ-
գտնալակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիշդում, այսուհետեւ իմ
գործարանում կը պատրաստվեն, բացի գէլատինան, մրգային և դադային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱ-
ԿԱՆ ԲՈՒՅԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ ՎԻՅԻԼԻ, ԷՍԻԼԻ, Կարկարաղի, Մարիէնաղի ջրերը, լու-
ծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների տուած կա-
նօններին: Արուստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հեշա-
կաւոր բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել ընտանի ջրերին, բայց և ունեն մի քանի գե-
րազանցութիւններ. նրանք կարող են միշտ թարմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-
նակ պարունակելով իրանց մէջ անխաթելու գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա-
խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:
Աւելորդ չեմ համարում սակ որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-
րութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ձգտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին
յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:
Տարածանութիւններից խուսափելու համար, խոսարհարար խնդրում եմ իմ ջրերի գործածող-
երին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ
գործարանների կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

25—50 (б)

Միայնակ մի մարդ կամենում է ԿՈՋՈՐՈՒՄ ունենալ մի բնակարան, առանձին կամ
ընտանիքում, բոլոր յարմարութիւններով, մի կամ երկու սենեակ:
Դիմել «Մշակի» խմբագրութեանը: 3—3

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ Ա. ՓՐԻԴՈՆՈՎ ԵՒ ԸՆԿ.

Առնում է և ծախում տոկոսաբեր արժեթղթեր, փոխարկում է փողեր, ապահովա-
գրում է I և II փոխառութիւնների խաղարկութեան տոմսակները ՎԱՅՍՈՒՆ Կօպէ-
կով: Պ.պ. օտարաքաղաքացիներին գրասենեակը խնդրում է ուղարկել և փոստի ծախսը,
նոյնպէս և ամեն մի անդորրագրի համար 15 Կօպ. կրուագաւոր (գերբովոյ) մարկայի
համար: 3—3

ВЪ КОДЖОРАХЪ

Дача Можневской (бывшая Ломидзе), около Телеграфной станции и Почты, отдаёт-
ся въ НАЙМЫ.
Спросить или въ редакціи „Мшакъ“, или у хозяйки дачи въ Коджорахъ. 3—3

ԴԷՊՈ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԵՔԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Միջի-փողոցի անկիւնում (երկրորդ տուն, դէպի աջ կողմ երևանեան հրապա-
րակից) Նարինանովի տանը ԲԱՅՎԱՅԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՆԵՍ ԿԵՐՈ-
ՍԻՆԸ ՄԱՍ ՄԱՍ ԾԱՏՈՒՐԻ ՀԱՄԱՐ: Մեր ստացած կերօսինը
տարբերվում է իր յատկութեամբ Թիֆլիսում մաս մաս ծախվող կերօսինից: Նա
հոտ չունի և կատարելապէս անվտանգ է:

ԳՆԵՐԸ ՁԱՓԱՌՈՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԵՄԱՑ ԲԱԳՈՒՆ ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ԳՆԵՐԻՆ:

Մառանքի կողմից խաբեարկութեան առաջն առնելու համար իւրաքանչիւր
ծառային, որ գալիս է կերօսին առնելու, արվում է մի ՄԱՐԿԱ „E. A. Цатуровъ.
Керосинъ“ գրութեամբ:

Առաջին պահանջը. ՎՐՈՇՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՄՈՏ, Պալլոսկու բժշկարանի կող-
քին: Արքունի և հասարակական հիմնարկութիւնները կարող են կերօսին ստանալ
առանձին զրբոյով և վճարել ամէն ամիս: 22—25 (Ե. Ա.)

Մամուլի տակից լոյս տեսաւ

„ՄՏԱՄՈՂՈՐ ԹԱՓԱՌԱԿԱՆ ԿԱՄ ԹՇՈՒԱՌ ԶՆԱՊԱՐՀՈՐԻ“
վերնագրով գիրքը, որ բաղկացած է 120 էրեսից:
Գինն է 25 Կօպէկ:
վաճառվում է կենտրոնական և „Աղբիւրի“ գրավաճառանոցներում:

Ազատվելով ծանր խլովիւնից ամենահասարակ և անփնա միջոցով, կարող եմ
ամեն ցանկացողներին ձրիաբար ուղարկել այն միջոցի բացատրութիւնը, որով ես բժշկ-
վել եմ:
Իմ հասցէս. Парижъ (Франція) Nicolson, 4 Rue Drouot, Paris. 5—6

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լ Ե Օ

ՊԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Գինն է 15 Կօպէկ: վաճառվում է ԲԱԳՈՒՆ՝ Տիգրան ՂՈՆԴԱՂԱՍՏԵԱՆԻ մօտ,
ՇՈՒՇԻ՝ Անդրէաս ԱՐԱՀԱՄԵԱՆԻ մօտ: 5—8

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը որոշել է առաջիկայ
սեպտեմբեր ամսին հիմնել Թիֆլիսի մէջ „ԿԱՐ ՈՒ ՁԵՆԻ“ դպրոց: Հայոց ծխական դպ-
րոցներում աւարտող աշակերտուհիներից ցանկացողները մտնել այդ դպրոցը, թող
իրանց խնդիրը զիմեն մինչև ներկայ ՅՈՒՆԻՍ ամսին 20-ը տիկին վարվարէ Բօտի-
նեանին, Գանօվկայա փողոց, տուն Շաղինեանի № 25: 5—3

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՒՆ ՀԱՍՏԱՑՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան

հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարագում է կենսի (կապիտալների
և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

1. Կապիտալների ապահովութիւնը ժԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում:
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երկնային համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու
համար:
3. Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիքները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿԱ-
ԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, վերամիջոցակայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԵՆԵՐԸ:

—ՊԱՆԵՍԱՅՎՈՒՄ ԵՆ ԱԳԻՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ—
Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար: 9—32 (Հ)